

ԴԱՐՉՎԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ  
ԱՌԱՋԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Դարձվածաբանությունը՝ որպես լեզվաբանության առանձին գիտաճյուղ, այն-  
քան էլ հին չէ: Թեև *դարձվածքները*՝ որպես լեզվական առանձնահատուկ երևույթ, ի-  
րենց արմատներով գնում են դարերի խորքը, սակայն լեզվի զարգացման համեմա-  
տաբար ուշ շրջանի արդյունք են՝ կապված մարդու լեզվամտածողության զարգացման  
ավելի բարձր մակարդակի հետ:

Տրամաբանությունն այն է, որ նախնական լեզվամտածողության շրջանում  
մարդու լեզուն խիստ աղքատիկ ու պարզունակ է եղել. արտաքին աշխարհն իր բազ-  
մաթիվ կողմերով ու երևույթներով արտացոլվել է լեզվի մեջ, յուրաքանչյուր առարկայի,  
գործողության ու հատկանիշի վերագրվել են համապատասխան բառեր: Մարդը նախ  
անվանել է իրեն շրջապատող առարկաներն ու երևույթները, իր մարմնի մասերը (ծառ,  
քար, ջուր, արև, անձրև, ոտք, ձեռք, գլուխ և այլն), և լեզվի զարգացման սկզբնական  
փուլում հաղորդակցումը տեղի է ունեցել, այսպես կոչված, *միաբառությամբ*, այսինքն՝ մի  
բառը *նախադասության* դեր է կատարել. նույն բառի մեջ համատեղված է եղել ինչպես  
նրա հատկանիշը, այնպես էլ՝ գործողությունը:<sup>1</sup>

Բնականաբար, լեզվի այդ փուլում բառերը *մենիմաստ* են եղել: Հետագայում  
միայն, միանման (երբեմն էլ տարբեր) առարկաների ու երևույթների միջև նմանություն-  
ներ գտնելով, մարդը դրանք ևս նույն բառերով է անվանել: Այսպիսով, աստիճանաբար  
բառերը ձեռք են բերել նաև տարբեր իմաստներ, որի հետևանքով էլ՝ *բազմիմաստու-  
թյուն*, ապա լեզվում հանդես են եկել *բառակապակցություններ*, որոնք էլ հիմք են  
հանդիսացել *դարձվածային կապակցությունների* համար: Ըստ հասկացություններ  
կողք-կողքի սկսել են հանդես գալ ինչպես մենաբառությամբ, այնպես էլ բառակապակ-  
ցություններով. այսպես՝ *դարմանել* և *դարման անել*, *երդվել* և *երդում ուտել* (տալ),  
*ծնրադնել* և *ծուր դնել* (*ծնկի վրա իջնել*), *արտասվել* և *արցունք թափել*, *ծեծվել* և *ծեծ  
ուտել*, *կամրջել* և *կամրջ կապել* և այլն: Ընդ որում, բառակապակցությամբ արտա-  
հայտված տարբերակը, բառային հետ համեմատած, ավելի մեծ տարողունակություն  
և արտահայտչականություն ունի: Այսինքն, եթե *դարմանել*-ը նշանակում է միայն  
*բուժել*, *բժշկել*, իսկ *ծնրադնել*-ը՝ միայն *չոքել*, ապա *դարման անել*-ը *բուժել* իմաստի  
հետ ձեռք է բերել նաև *հարեհաս լինել*, *սատար կանգնել*, *օգնել*, *հոգսը հոգալ*, եթե  
*ծնրադնել*-ը նշանակում է *ծնկի գալ*, *խոնարհվել* մեկի կամ մի բանի առաջ, ապա *ծուր  
դնել*-ը նշանակում է նաև *ծնկի գալով աղերսել*, *արտասվել*, *հնազանդվել*, *խնդրել* և  
այլն: Այս ճանապարհով էլ բառակապակցությունները *վերաիմաստավորվել են* և ձեռք  
են բերել *դարձվածի* իմաստ:

Բնականաբար հասկանալի է, որ եթե դարձվածային բառակապակցություննե-  
րի այս փուլում նրա կազմի մեջ եղած բառ-բաղադրիչները հիմնականում կամ մասնա-  
կիորեն պահպանում են իրենց իսկական իմաստները, ապա մարդու լեզվամտածողու-  
թյան ավելի բարձր փուլում նրանք նոր իմաստներ են ձեռք բերել, և ամբողջ բառա-  
կապակցությունը լրիվ կամ մասնակիորեն *վերաիմաստավորվել է*, այսինքն՝ նրա ի-  
մաստն այլևս չի բխել իր բաղադրիչ բառերի իմաստների գումարից:

Դարձվածների առաջացման հարցում չափազանց մեծ է նաև մարդու *կենսա-  
փորձը*, բնությունն ու նրա երևույթների ճանաչելը, կենդանական աշխարհը, տարբեր  
կենդանիների վարքագիծն ու նրանց յուրաքանչյուր տեսակի հատկանիշներն իմա-  
նալը: Մինչև մարդն իր կենսափորձով չիմանար, որ ձեռքով ձուկ բռնելիս անպայման  
պետք է նրան գլխից բռնի, չէր ստեղծվի *ձուկը գլխից բռնել* բառակապակցությունը,  
որը վերաիմաստավորվելով՝ այլևս կապ չունի ձուկ բռնելու հետ, այլ նշանակում է

<sup>1</sup> Էդ. Ա դ ա յ ա ն, *Լեզվաբանության հիմունքներ*, Եր. 1987, էջ 585:

*հիմնավոր, մտածված գործ բռնել*: Այդպես էլ՝ որևէ գործի անհնարին լինելը, որևէ հարցի չլուծվելը պատկերավոր կերպով արտահայտելու համար ստեղծվել է *երբ կրիան (ծուկը) ծառը բարձրանա* դարձվածը:

Եթե մարդը չիմանար, որ կոկորդիլոսն իր մեջ կուտակված թունավոր նյութերը արտազատում է արցունքի տեսքով, չէր ստեղծի *կոկորդիլոսի արցունքը թափել* դարձվածը, որ նշանակում է *կեղծ, սուտ լաց լինել*: Մարդը շատ լավ գիտեր կրակ առաջացնելու դժվարությունը և բնության մեջ ջրի առատ ու տարածված լինելը, դրա համար էլ ստեղծել է *կրակի գին* (շատ թանկ) և *ջրի գին* (շատ էժան) դարձվածները: Կամ մարդն իր շրջապատում *սև աղվեսի* ու *սպիտակ ազոսալի* չհանդիպելու հիմնավորումով է ստեղծել այդ դարձվածները, որ նշանակում են *հազվադեպ, չճարվող բաներ*:

Բնականաբար, մարդու կողմից ստեղծված դարձվածները կազմվել են իրեն շրջապատող առարկաների ու իրեն ծանոթ երևույթների հիման վրա. նման դարձվածների կազմի մեջ մտնող բառերը (կամ նրանց մի մասը) իրենց իսկական իմաստները գրեթե չեն պահում, դրանք (կամ դրանց մի մասը) վերաիմաստավորվում են ենթարկվելով լրիվ կամ մասնակի իմաստային փոխակերպման, ինչպես՝ *կրակի գին, ջրի գին, բերանը ջուր առնել* (լռել, չխոսել), *բերանի գոլն իմանալ* (մեկի կարծիքը, մտադրությունը իմանալ), *աչքին չերևալ* (կորչել, հեռանալ), *քիթ ու մուռք անել* (մեկին արհամարհել, դեմքը ծռնել), *նոսքը նոսքին զցել* (հանգիստ, անհոգ վիճակում լինել, ոչ մի բանով չհետաքրքրվել), *ականջին օդ անել* (մշտապես հիշել, երբեք չմոռանալ) և այլն:

Լեզվամտածողության զարգացման ավելի բարձր մակարդակում, իր ավելի մեծացող կենսափորձի շնորհիվ մարդն իր բառապաշարը հարստացրել է՝ հասնելով *վերացարկման* ավելի բարձր աստիճանի: Դրա շնորհիվ ի հայտ են եկել արդեն բառակապակցություն-դարձվածներ, որոնց իմաստը բոլորովին չի բխել իրենց բաղադրիչ բառերի իմաստային գումարից: Այսպես օրինակ, ոչ մեկը չի կարող ասել, թե ինչ կապ կա հետևյալ դարձվածների և նրանց բաղադրիչների իմաստների միջև՝ *մեկի բանջարանոցը քար զցել*, (ոչ ուղղակի ճանապարհով մեկին ակնարկել, վիրավորել, հանդիմանել), *գայլի գլխին ավետարան կարդալ* (մեկին ապարդյուն խորհուրդներ տալ, ջանալ ճիշտ ուղու վրա բերել), *ջրից չոր դուրս գալ* (ասվում է ճարպիկ, խոբամանկ, նեղ վիճակից, փորձանքից անվնաս դուրս ճողոպտող մարդկանց վերաբերյալ), *փոքորիկ մի բաժակ ջրում* (ոչ լուրջ պատճառով առաջացած իրարանցում, ոչնչից մեծ աղմուկ), *մեկի փոխանը կատու զցել* (մեկին խիստ անհանգստացնել, տանջել) և այլն:

Նշենք մի հանգամանք ևս. ամբողջ դարձվածային կապակցության իմաստը կարող է այնքան հեռանալ իր բաղադրիչների իմաստների գումարից, որ մի կողմից անհասկանալի դառնա հասարակության լայն զանգվածների համար, մյուս կողմից՝ հասկանալի մնա մարդկանց նեղ շրջանակներում՝ որպես հաղորդակցման միջոց. լեզվում այսպես են առաջացել *ծածկաբանությունները*: Այսպես՝ *կծիկը դնել* դարձվածը լայն տարածում չունի, այն ստեղծվել է որպես *նեղ դրությունից, վտանգից ճողոպտելու* ծածկախոսություն (Շղեթք, մեզ հետևում են՝ *կծիկը դրիճք*,<sup>2</sup> շնչաց Հովիկը): *Պատը ծակ է* ծածկաբանությունը *նախազգուշացման* բանաձև է (զգուշացի՛ր, մեզ լսող կա, կամ մեր լեզուն հասկացող կա): Ծածկաբանություններ են նաև *բարձր փոխել* (երեխա ունենալու նպատակով ուրիշ տղամարդու հետ կենակցել), *զլուխն ուտել* (սպանել, նաև հղիությունը ընդհատել), *եղանակը խառն է* (ընտանիքում կամ հիմնարկում անհամերաշխություն է տիրում) և այլն:

Լեզվաբանական գրականության մեջ դարձվածների առաջացման այս երևույթը (երբ դարձվածային միավորի վերածվելով՝ բառակապակցությունը նոր իմաստ է ձեռք բերում բառերի վերաիմաստավորման շնորհիվ) կոչվում է *фразеологическая деривация*<sup>2</sup> *դարձվածաբանական ածանցում*,<sup>3</sup> որ չպետք է շփոթել բառակազմական *ածանցման* հետ:

<sup>2</sup> А. К у н и в, *Инверсия как явление фразеологической стилистики*, Л., 1975, А. Назарян, *Фразеология современного французского языка*, М., 1987.

<sup>3</sup> Ն. Մ ե լ ք ո ն յ ա ն, *Ֆրանսերենի դարձվածաբանության զարգացման վերլուծական միտումները*, «Բանբեր Երևանի համալսարանի», թիվ 2, Եր., 2002:

Այժմ տեսնենք, թե ինչպես են ստեղծվում դարձվածները. դրանք անհատական<sup>4</sup>, թե՞ կոլեկտիվ ստեղծագործություններ են: Այս խնդիրը սերտորեն կապվում է բառի ծագման տեսությունների հետ:<sup>4</sup> Էդ. Աղայանը գրում է. «...նախնական արտադրողական կոլեկտիվի անդամները հավաքվել և միասին ստեղծել են այս կամ այն բառը: Ո՛չ, նրանք ստեղծագործել են բառերն այնպես, ինչպես ստեղծագործել ու ստեղծագործում են ժողովրդական երգերը, էպոսը և այլն: Հայտնի է, որ ժողովրդական յուրաքանչյուր ստեղծագործություն իր ծագմամբ կրում է *անհատական բնույթ* ... *Մեկերը* (ընդգծումներն իրենց են – ԽԲ) ստեղծագործում են, հասարակությունը յուրացնում է այն, մշակում ու զարգացնում է դարերի ընթացքում, դարձնում իր սեփականը... Երկուստ աշխարհի պրոցես է ներկայացնում նաև *բառերի* (նախապես *բառնստածությունների*) ստեղծագործությունը» (ընդգծումները մերն են – ԽԲ):<sup>5</sup>

Բառերի նման՝ դարձվածներն էլ ծագմամբ անհատական բնույթ ունեն: Ծնվելով անհատների, *մեկերի* կողմից՝ դարձվածը ընդհանրանում է և դառնում ընդհանուրի սեփականությունը, և իր խոսքի ուժն ավելի աստղակայնություն, այն ավելի ազդեցիկ ու պատկերավոր դարձնելու, տվյալ անձնավորությանը կամ երևույթը ավելի դիպուկ գնահատելու նպատակով, ելնելով տվյալ իրավիճակից, խոսողը վերհիշում ու վերարտադրում է արդեն պատրաստի լեզվական այդ միավորը՝ կամ բառակապակցության կամ նախադասության տեսքով:

Այսպիսով՝ դարձվածը գոյացել է մարդու՝ *աշխարհաճանաչողության* և *լեզվի զարգացման ավելի բարձր մակարդակում*, երբ մարդն ի վիճակի էր *վերացարկում* կատարել, այսինքն՝ մտովի վերանայ առարկաների մի շարք հատկություններից ու հարաբերություններից և առանձնացնել դրանցից որևէ մեկը:<sup>6</sup>

Լեզվաբանների մեծ մասը դարձվածների առաջացումը պայմանավորված է համարում *լեզվական նշանով*. դարձվածը լեզվում հենց այնպես չի ստեղծվում, նրա ստեղծման համար անպայման հիմք ու նախադրյալներ են անհրաժեշտ. «Արտաքին աշխարհի առարկաների ու երևույթների (դեմոստատների) հետ ունեցած կապը ուղղակիորեն բխում է լեզվի *նշանային բնույթից*,- գրում է լեզվաբան Ա. Պոտեբնյան:<sup>7</sup> «Ամեն մի դարձվածային միավոր,- գրում է Գ. Պերմյակովը,՝ արտահայտում է մեկ միասնական հասկացություն, այսինքն *ինչ-որ բանի նշան է ծառայում*... Դարձվածային միավորի նշանային բնույթն առաջին հերթին այն հանգամանքն է, որով ապացուցվում է, որ դարձվածները առանձին առարկաների ու հարաբերությունների նշաններն են, և դա արտահայտվում է նրանց իմաստային և տրամաբանական պլաններում»:<sup>8</sup>

Դարձվածի նշանային բնույթն է պատճառը, որ հաճախ համանման երևույթների վերաբերյալ տարբեր ժողովուրդներ դարձվածներ են ստեղծել՝ իրենց աշխարհագրական միջավայրի, կենցաղային պայմանների, ազգային սովորությունների, ինչպես նաև հոգեբանական հատուկ գործոնների հանգույն: Այսպես, համանման երևույթը պատկերավոր ու տպավորիչ ներկայացնելու համար հայերենում ստեղծվել է *մնացել են երկու քարի արանքում*, իսկ ռուսերենում՝ *մնացել են երկու կրակի արանքում* (պատճառը ռուսների քար չունենալն է): Ռուսի մտածողությամբ սիրտը կարող է մինչև կրումնկներն ընկնել՝ *сердце в пятки ушло*, իսկ հայի *սիրտը միայն փորն է ընկնում*, կամ *լեղաճաք է լինում*, *լեղին պատռվում է* կամ *հոգին կորեկի հատ է դառնում*: Կամ ռուսի *բանը* կարող է *ծխախոտ լինել՝ дело табак*, հայի *բան՝ բուրդ* (*բանս*) (*բանդ*) *բանը բուրդ է*), ինչպես նաև՝ ռուսի համար՝ *дело в шляпе*, հայի համար՝ *բանը գլուխ բերել*, *բանը գլուխ գալ*: Մաստիկ նիհար, հյուծված, տանջահար մարդուն ռուսները համեմատում են *կատվի* հետ՝ *дрная кошка*, իսկ հայերը՝ *ցամաք ձորի աղվեսի*, կամ *ղար թագու* կամ ավելի պատկերավոր ասում են՝ *քիթը բռնես՝ հոգին կտա*: Մոված, կիսաքաղց, խիստ կարիքի մեջ եղած մարդու մասին ռուսերենում ստեղծվել է *клясть* (положить) *зубы на полку* դարձվածը, հայերենում՝ *ատամի ժանգով ասրել*, *բերանը քանում բռնել*, *պաղ*

<sup>4</sup> *Отто Есперсен, Философия грамматики, М. 1958, А. Назарян, նշվ. աշխ.:*

<sup>5</sup> *Էդ. Աղայան, Լեզվաբանության հիմունքներ, Եր., 1987, էջ 595-596:*

<sup>6</sup> *Փիլիսոփայական քննարան (խմբ. Մ. Ռոզենտալի), Եր., 1975, էջ 404:*

<sup>7</sup> *А. Потевня, Из лекции по теории словесности, Харьков, 1984, стр. 103.*

<sup>8</sup> *Г. Пермяков, От поговорки до сказки, М., 1970, стр. 34-35.*

*թոնրի վրա նստել, շուն թակելով ասյրել, քարին քացի տալով ասյրել, օրվա հացի կարոտ լինել* և այլն:

Դարձվածի՝ որպես լեզվական նշանի հետ ամենից առաջ առնչվում են նրա ազգային բնույթն ու ազգային լեզվամտածողությունը: Ամեն մի դարձված կապված է այդ լեզուն կրող ժողովրդի ու նրա լեզվամտածողության հետ, պարունակում է տվյալ ազգի սովորություններն ու ավանդույթներն և հիմնականում հարազատ է միայն այդ ազգին. «Ազգային առանձնահատկություններով է օժտված լեզուների դարձվածային համակարգը ամբողջությամբ», գրում է Վ. Գակը:<sup>9</sup> Հայտնի դարձվածաբան Ա. Նազարյանն ավելացնում է՝ «Դարձվածաբանության ազգային առանձնահատկությունները դրսևտրվել են նրա ուսումնասիրության բոլոր տեսանկյուններով»:<sup>10</sup>

Ճիշտ է, հայոց լեզվի հարուստ դարձվածային ֆոնդի մեջ մտնում են նաև այլ լեզուներից կատարված փոխառություններ ու պատճենումներ, բայց դրանց տեսակարար կշիռը այնքան էլ մեծ չէ. կասկածից վեր է, որ հայերենի դարձվածների ճնշող մեծամասնությունը գոյացել է ազգային հիմքի վրա և հանդիսանում է հինավուրց հայ ժողովրդի հոգևոր ու մշակութային, գիտական ու հասարակական կենսագործունեության պտուղը՝ նրա ստեղծագործական հանճարի արդյունքը:

Յուրաքանչյուր լեզվի դարձվածային միավորներում ամենից առաջ վճռական նշանակություն ունեն տվյալ լեզվի բառային կազմը, հատկապես նրա իմաստային հարստությունն ու բառակազմական հնարավորությունները: Դարձվածները կազմվում են տվյալ լեզվի ներքին օրինաչափություններից բխող, այդ լեզվին հատուկ քերականական առանձնահատկություններով: Սակայն դարձվածների առաջացման ու տարածման գործում կարևոր նշանակություն ունեն նաև *արտալեզվական գործոնները*: Ամեն մի լեզվում դարձվածների բովանդակության ձևավորման համար հիմք են հանդիսացել տվյալ լեզուն կրող ժողովրդի պատմությունն ու ազգագրությունը, աշխարհագրությունը, կենդանական աշխարհն ու բնակլիմայական պայմանները, տնտեսական կյանքն ու կենցաղը, մշակութային կյանքն ու արհեստները: Դարձվածներում ամենից առաջ արտացոլվում են տվյալ ժողովրդի *հոգին* ու *հոգեբանությունը*, մտածելու և դատելու կարողությունները, նրա *ինտելեկտը* և այլն: Այսպես, Սիբիրի ժողովուրդների լեզվում հարյուրավոր դարձվածներ կան՝ կապված ձյան տարբեր տեսակների, փոթորիկի ու սառույցի, ծառերի, անտառի ու փայտի, անտառային կենդանիների ու որսորդության հետ, իսկ հարավի ժողովուրդների մոտ դրանց մի մասը իսպառ բացակայում է. սրանց մոտ էլ կան իրենց տարածքի, բնության ու կենդանական աշխարհի հետ կապված դարձվածներ, որոնք չկան հյուսիսի ժողովուրդների լեզվում:

Պայմանավորված իրենց ազգային բնույթով՝ դարձվածների մեծ մասը անթարգմանելի է, որովհետև հատուկ է միայն տվյալ ժողովրդի կյանքին ու լեզվամտածողությանը: Սակայն այդ անթարգմանելիությունը բացարձակորեն չի կարելի ընդունել, որովհետև ժողովուրդների լեզվամտածողությունների միջև չինական պարիսպ չկա: Դարձվածների մի մասը, իհարկե, թարգմանվում է և պատճենվում, այլապես աշխարհի շատ ժողովուրդների սեփականությունը չէին դառնա հին հունական ու լատինական, ինչպես նաև աստվածաշնչային բազմաթիվ դարձվածներ: Նույնիսկ որոշ դարձվածների մասին դժվար է ասել՝ դրանք պատճենումներով են անցել մի լեզվից մյուսին, թե տարբեր լեզուներում առաջացել են ինքնուրույնաբար: Օրինակ՝ *իրար հետ շուն ու կատու դառնալ (լինել)* դարձվածը նույն իմաստներով գործածում են նաև անգլիացիները՝ *cat and dog life* (շուն ու կատվի կյանք), ֆրանսիացիները՝ *vivre comme chien et chat*, ռուսները՝ *жить как кошка с собакой*, կամ՝ *մազից կախված լինել* – ռուսերեն՝ *висеть (держаться) на волоске*, անգլերեն՝ *hang by on a thread*, ֆրանսերեն՝ *ne tenir qu, a un cheveu*.

Ամառարկելի է, որ թարգմանաբար են ամբողջ աշխարհի սեփականությունը դարձել անտիկ աշխարհի հետևյալ դարձվածները՝ *աքիլեսյան գարշապար, դանայիդյան տակառ, պրոկրուստեսյան մահիճ, դամոկլյան սուր, ավգյան ախտոներ, գորդյան հանգույց, պյուրոսյան հաղթանակ, Թեսիդայի կշեռք, Ռուրիկոնն անցնել, Բարոսի եր-*

<sup>9</sup> В. Г а к, *Беседы о французском слове*, М., 1966, стр. 249.

<sup>10</sup> А. Назарян, *նշվ. աշխ.*, էջ 41:

կրթւածային միավորներ, Մորիփետոսի գիրկն ընկել, տրոյական ճի, առատութեան եղջյուր, սիզիֆյան աշխատանք, դրակոնյան օրենքներ, Էրոսի նետով խոցվել (սիրահարվել), ավետյաց երկիր, դելփիական պատգամախոս (գուշակող), Էլիսյան երկիր (անմահների երկիր), կաստելյան շուն (տան պահապան), հոմերոսյան ծիծաղ, քրքիջ, կոլոմբոսի ձու, տանտալոսյան տանջանքներ (շատ մտտիկ գտնվող նպատակին չհասնելուց առաջացած տանջանքներ), և դո՛ւ Բրուտոս (մտերիմ, հարագատ մարդու դավաճանություն, պարսավանք՝ սպերախտության դեմ) և այլն:

Թարգմանության միջոցով են լայն տարածում գտել նաև աստվածաշնչյան դարձվածները՝ Աստծու գառ (հորթ), Աստծու տուն, Ադամի որդի, Ադամի զգեստով, Ադամի և Եվայի ժամանակներից, արգելված պտուղ, բարեբանյան աշտարակաշինություն, գայթակղության քար, եղենական խնձոր, թզենին պահողը կուտի նրա պտուղը, թզենու տերև, երկնային դրախտ, երկնային մանանա, իր խաչը կրել, Հուդայի համբույր, ձեռքերը լվանալ, ձայն բարբառո հանապատի, Նոյյան տապան, նոյի աղավնի, նոյի ազնավ, Սողոմ-Գոմոր, փոս փորողը փոսը կընկնի, քարերը հավաքելու ժամանակը, քավության նոխազ և այլն:

Թարգմանաբար են տարածվել նաև հեղինակային ծագում ունեցող մի շարք դարձվածներ՝ փոթորիկ մի բաժակ ջրում (Մոնթեսքյու), բոլոր ճանապարհները Հոմո են տանում, կրակից շագանակներ հանել (Լաֆոնտեն), վերջին մոհիկան (Կուպեր), երկու տիրոջ ծառա (Գոլդոն), լինել, թե՞ չլինել, ժամանակը իր շավիղից դուրս է եկել (Շեքսպիր), խավարի թագավորություն (Բոբրոլյուրով), արջի ծառայություն մատուցել, սայլը տեղից չի շարժվում, սիրամարգի փետուրներով ազռավ (Կոիլով), կրակի վրա յուղ լցնել (Հորացիոս), պղտոր ջրում ձուկ որսալ (Եգոպոս), կոտրած տաշտակի առաջ կանգնել (Պուշկին) և այլն:

Դարձվածների ու արտահայտությունների մի փոքր խումբ էլ կա, որ տարբեր լեզուներում չի թարգմանվում, և չնայած օգտագործվում է լատիներենով, բայց դրանց իմաստները հասկանալի են, օրինակ՝ alma mater (մայր բուհ), vini, vidi, vici (եկա, տեսա, հաղթեցի), tabula rasa (մաքուր գրատախտակ), magister dixit (ուսուցչուհին ասաց - ասել է), de facto, de jure (առկան և փաստացին), momento mori (այս րոպեին, հենց հիմա): Դիշտ է, փոխառյալ ու պատճենված դարձվածները ցանկացած լեզվի դարձվածային համակարգի բաղադրիչ մասն են կազմում, բայց ինչպես ամեն մի լեզվի, այնպես էլ հայոց լեզվի դարձվածների հարստության առաջացման հիմնական աղբյուրը հենց ինքը՝ մայր լեզուն է՝ իր գործառության բոլոր ոլորտներով՝ իր գրաբարյան, միջին հայերենի, աշխարհաբարի շերտերով, ինչպես նաև բազմաթիվ նորակազմություններով, որոնցով այսօր հեղեղված է մեր զանգվածային լրատվության լեզուն: Բերենք դրանցից մի քանիսը միայն (դրանց մի մասը նույնպես թարգմանաբար է անցել մեր լեզվին) աթոռը կթել, յուղոտ աթոռ, աթոռը գրավել (խել), ազատ աթոռներ, աթոռները փուլ գալ, աթոռը պահել, աթոռից կառչել, աթոռը պաշտել, փակուղի մտնել, փակուղուց դուրս գալ, խաղի մեջ մտնել, խաղից դուրս գալ, ձայն կռչիկը աջ ոտքը հագնել, գնացքից թռչելու ժամանակը, նավը լքել ոչ միայն խորտակվելիս, դրամի լվացում, երակ մտնել, մանկուղղ դառնալ, սառը ցնցող ընդունել, տանիք ունենալ, տակառ գլորել մեկի վրա, կանաչ լույս վառել (մեկի առաջ), մեր դեմ խաղ չկա, եղունգ ունես՝ լեզետիմությունը քորիք, ոտքերը լեզետիմությանը չափով մեկնիր և այլն:

Այժմ համառոտակի նշենք այն աղբյուրներից մի քանիսը, որոնցից առաջացել են բնիկ հայկական դարձվածային միավորները:

Հասկանալի է, որ վաղնջական մարդն ի սկզբանե պետք է իր կենցաղից ելնելով ստեղծեր դարձվածները, ինչպես՝ անկողին ընկնել, քար քաշել, քացախ խմել, ձեռքերը ծալած նստել, չորս պատերի մեջ փակվել, օրվա հացի կարոտ մնալ, ականջին օղ անել, ջրի ճամփա դարձնել, հացի մեջ աղ չկա (մեկի), մեկի ասեղը թելել, տան վրա մոխիր մաղվել, ետևից կարմիր խնձոր ուղարկել, (մեկի) բուրդը քամուն տալ, ձուկը գլխից բռնել, էս խմորը շատ ջուր կվերցնի և այլն:

Մարդու կենցաղի անբաժան մասն են եղել հողագործությունն ու գյուղատնտեսությունը, հետևաբար այս բնագավառների հետ կապված դարձվածները նույնպես գալիս են դարերի խորքից՝ կամը կալից հանել, (խոսակցության նյութը փոխել, շեղվել նյութից), կամն առնել՝ քարերն ընկնել (նույն իմաստն ունի), խտիը (գերանդին) քարին

*առնել, հին դարմանը քամուն տալ* (անցած դեպքերը, խոսակցությունը անհարկի հիշել, պատմել), *դարմանի տակ ջուր, լուծին մոտ չգալ*, (մեկի) *կանաչ արտը հնձել, կապը քաշել, կապը կտրած, պարարտ հող ստեղծել, պտուղը ծառից հեռու չընկնել, մույն սանրի կտավ, եզան համառություն, մի խուրձ խոտով էշին քեռի չեն ասի, սանդը ծեծողին ղրխկ ասել, ճիպոտը կամին դնել* (սկսած գործը կիսատ քողնել), *մանգաղը պատից կախել* (անգործ մնալ), *վերին արտի ցորեն* (ընտրյալ), *ջուր ու ձավար կանգնեցնել* (շատախոսել), *կարկուտ ծեծել* (անհիմն խոսել), *կորկուտ ունի ծեծելու* (ասելիք, պահանջ ունի), *ձին չառած՝ մտորը կապել, կարկուտը ծեծած տեղն է ծեծում* և այլն:

Մարդիկ բազմաթիվ դարձվածներ են ստեղծել մաև իրենց շրջապատող բնության, նրա բարի ու չար երևույթների հետ կապված՝ *զլխին սև ամպեր են կուտակվել, քամի կուլ տալ, ջրի երես բարձրանալ, ջրի բերած, ջրի տարած, քամի անել, քամին որ կողմից է փչում, երկինք բարձրացնել, քիթեռնիկի կյանք ունենալ, արևը (մեկի) մայր մտնել* (մահանալ), *արևը վատ տեղ է մայր մտել* (խոսելու կամ գործելու համար աննպաստ պայմաններ ստեղծվել), *արևի երես հանել* (որևէ գաղտնի բան բացահայտել), *արևի վրա էլ բծեր կան* (ամեն բան էլ քերություն կունենա), *արծվի աչք* (ամենատես, սուր հայացք), *գետնի տակից բուսնել, գետնի տակն անցնել, գայլի ախորժակ ունենալ, աստղը թևքվել (մեկի), աստղը խավարել (մեկի), աստղերը հաշվել* (ասվում է հայարտ ու գոռոզ, ինքնահավան մարդու մասին) և այլն:

Քանի որ մարդուն ամենամոտ օբյեկտը, առարկան իր մարմինն է, իր օրգանիզմը, դրա համար էլ մարդն ամենաշատ դարձվածներ կազմել է իր մարմնի մասերի անվանումներով՝ սկսած մազերից, վերջացրած եղունգներով. մարդը հազարավոր դարձվածներ է կազմել իր մարմնի ինչպես արտաքին, այնպես էլ ներքին օրգանների անվանումներով՝ վերախմաստավորելով դրանք: Այսպես, օրինակ, մեր հաշվումներով հայոց լեզվում միայն *զլուխ* գերադաս անդամով 700-ից ավելի դարձվածներ կան, իսկ եթե նկատենք դրանց բազմիմաստությունը, դրանց թիվը կհասնի հազարների (հայտնի է, որ դարձվածներից շատերը իրենց բուն իմաստներից բացի ունեն մաև մի քանի իմաստներ): Բերենք թեկուզ մեկ օրինակ. *զլուխ բարձրացնել* դարձվածն ունի 6 իմաստ՝ 1. ապստամբել, ոտքի ելնել, 2. հակաճառել, վիճել, 3. ընթուստանալ, չենթարկվել, 4. գոյանալ, առաջանալ, 5. սթափվել, ուշքի գալ, 6. աշխուժանալ, վերակենդանանալ:

Որ իսկապես լեզուների դարձվածային ֆոնդի համակարգում թվային քանակով մարմնի մասերի անվանումներով կազմված դարձվածային համակարգն է գերակշռողը, հաստատում է մաև մեր կատարած վիճակագրությունը: Ասվեց, որ *զլուխ* բաղադրիչով հայերենում կա 700-ից ավելի դարձված, *աչք*-ով՝ 600, *սիրտ*-ով՝ 395, *ձեռք*-ով՝ 380, *ոտք*-ով՝ 345, *բերան* բառով՝ 268, *լեզու*-ով՝ 180, *քիթ* բառով՝ 166, *ականջ*-ով՝ 145, *մատ*-ով՝ 78, *ատամ*-ով՝ 65, *մազ*-ով՝ 40 և այլն: Նկատել ենք, որ մեզ ծանոթ լեզուներում մույնպես մարմնի մասերի անվանումներով կազմված դարձվածները մեծ թիվ են կազմում, սակայն ոչ մի լեզվում հայերենի չափ բազմաքանակ չեն. դրանցում մարմնի մասի որևէ անուն բաղադրիչով կազմված դարձվածների թիվը առավելագույնս չի անցնում 50-ի սահմանը:

Տարբեր ժողովուրդների դարձվածային համակարգում իրենց թվային քանակով ու բազմազանությամբ երկրորդ տեղում են ընտելացրած կենդանիների ու թռչունների (շուն, կատու, կով, եզ, ձի, ոչխար, այծ, նոխազ, էշ, ջորի, խոզ, խոճկոր, աքաղաղ, հավ, բաղ...), ինչպես մաև իր շրջապատում ապրող կենդանիների, զազանների, սողունների ու թռչունների (գայլ, արջ, աղվես, բորենի, կրիա, կխտար, եղնիկ, մուկ, մողես, օձ, արծիվ, ագռավ, ծիտ, բազե...) անվանումներով վերախմաստավորված բառակապակցություններ, որոնցով ժողովուրդը կենդանիներին բնորոշ հատկանիշներով ու արարքներով բնութագրում է մարդկանց, նրանց արարքներն ու հարաբերությունները:

Ելնելով դարերի փորձից, երբեմն էլ սնահավատությունից՝ ժողովուրդը որոշակի կապ է ստեղծել գույների խորհրդանշական իմաստների ու դրանց հետ կապված առարկաների, երևույթների ու մարդկային հարաբերությունների իմաստների միջև և կյանքի տարբեր բնագավառների վերաբերյալ ստեղծել է բազմաթիվ դարձվածներ՝ դրանց բաղադրիչներ դարձնելով գույների անունները՝ մի գույնի հետ կապելով հաջողության ու բախտավորության, մյուսի հետ՝ անհաջողության ու դժբախտության հավատալիքներ: Այսպես, դարեր շարունակ մարդու համար *սև* գույնի անվանումը խոր-

հորդանշել է սգո, տխրության, դժբախտության, մահվան, անհաջողության, ամոթի, խտովության նշան (*արևը սևանալ, սև գիրը գրել, գլխին սև ամպեր կուտակվել, սևա-սիրտ լինել, սև օրի գալ, սև հագնել, սև քուն մտնել, անունը սև քարին գրվել, արանքնե-րով սև կատու անցնել, սև շան հանդիպել...*), կարմիր գունանունն օգտագործվել է սևին հակահիշ իմաստներով՝ որպես ուրախության, հաղթանակի, տոնահանդեսի, բարե-հաջողության խորհրդանիշ (*կարմիր օր, կարմիր արև, կարմիր կապել-ամուսնանալ...*): Բայց քանի որ կարմիրը նաև արյան գույնն է, դրանով կազմվել են նաև կոտորած, սպանդ, արյունահեղություն, սպանություն նշանակող ԴՄ-ներ: *Կարմիր* գունանունը լույս գոյականի հետ *արզելք* է նշանակում (*կարմիր լույս վառել* մեկի առաջ): Այս դար-ձվածին հակահիշ է *կանաչ լույս* դարձվածը, որը հաջողության, բարեմաղթության խորհրդանիշ է: *Կանաչ* գունանունով խորհրդանշվում է կյանքը, երիտասարդությունը, հաջողությունը, *սպիտակ* գույնով նշվում է մաքրություն, անաղարտություն, պարզու-թյուն, *կապույտով*՝ երազանք, մույնիսկ ցնորք, անհասանելիություն, *վարդագույն* գու-նանունով խորհրդանշվում է ուրախ, պայծառ տրամադրություն, ցանկալի սպազա, երջանիկ կյանք (*վարդագույն ակնոցներով նայել*), *դեղին* գույնը նախազգուշացման, ինչպես նաև թախծի նշան է:

Որոշ դարձվածներում միասնաբար հանդես են գալիս տարբեր գունանուններ. օրինակ՝ *կարմիր-կանաչ կապել*, (տղային ամուսնացնել), *սևը ներսն անել, սպիտակը՝ դուրս, սևը սպիտակից չջոկել, կարմիր օրը սևացնել* և այլն:

Ինչպես երևում է բերված օրինակներից, գունանուններով կազմված դարձ-վածների մի զգալի մասը նորաբանություններ են: Բոլորովին վերջերս (Իրաքի պատե-րազմի հետ կապված) ստեղծվել է *նարնջագույն մակարդակ* դարձվածը, որը նախոր-դում է *կարմիր մակարդակին* (արյուն թափելուն):

Մարդու գիտակցության զարգացման ավելի բարձր մակարդակում, կապված գիտության ու արվեստների զարգացման հետ, լեզվում էլ առաջ եկան բազմաթիվ դարձվածներ. այսպես՝ երգ-երաստվածության հետ են կապված *հին երգը երգել, առա-ջին ջութակ, մեկի դուրունկի տակ պարել, մեկի դուրունկը փչել, հեռու դասիի ձենն անուշ է* (ծող.) և այլն: Թատերական արվեստից են առաջացել *կուլիսների ետևում, դիմակը պատռել, իր դերում չլինել, թատերաբեմ դուրս գալ, դիտողի դերում լինել, թատրոն սար-քել* (մեկի գլխին), *հանդիսատես ձեռք բերել* և այլն: Նկարչությունից՝ *իններորդ ալիք, վրձնահարվածներ տալ, վառ գույներով ներկայացնել, գույները խտացնել, մեծ կտավի գործեր ստեղծել, սև (մռայլ) գույներով պատկերել*. կա նաև սրա հակահիշը՝ *վարդա-գույն (վառ) գույներով պատկերել* և այլն:

Գիտության տարբեր բնագավառներից են առաջացել՝ *փակագծերը բանալ, հավասարեցնել գրոյի, հավասարության նշան դնել, ընդհանուր հայտարարի բերել, տորիչելյան դատարկություն, հակադիր բևեռներում գտնվել, մեռյալ կետից հանել, հա-կարարձ համեմատական լինել, օգտակար գործողության գործակից* (մաթեմատիկա, ֆիզիկա), *կույրադիրը հեռացնել, պատրաստի դեղատոմս, երակ մտնել, սրտի գաղտ-նիքը իմանալ, կենդանության նշաններ ցույց տալ, սև (վարդագույն) ակնոցներով նա-յել, հին հիվանդությունից ձեռք չբաշել, վանեցու արյուն ներարկել, խրոնիկական հի-վանդությանը տառապել* (բժշկությունից): *Վերջակետ դնել, մեծատառով գրել, հատուկ անուն դառնալ, Գասպարյանի շարադրություն* (անիմաստ, խառնիշփոթ շարադրանք), *ազոավի ճանկեր* (տզեղ ձեռագիր), *այրից միևչև ֆե* (լեզվաբանությունից): *Թնդանոթի միս, երկսայրի սուր, նիզակ ճոճել* (մեկի դեմ), *դատարկ կրակոց, զենքերը ցած դնել, վառողը չոր պահել, սվիններով դիմավորել, սառը պատերազմ, ծանր հրետանի, հինգե-րորդ գորասյուն, ներքին թշնամի, դանդաղ գործող ռումբ, թեթև հեծելազոր* (ռազմա-կան կյանքին վերաբերող):

Մարզական կյանքից նույնպես բազմաթիվ բաղադրյալ տերմիններ դարձվա-ծային արժեք են ձեռք բերել. *ահա դրանցից մի քանիսը՝ դեղին քարտ ցույց տալ, խա-ղից դուրս գալ, խաղի մեջ մտնել (մտցնել), վերջնագծին հասնել, (հասցնել), երկրորդ շնչառություն ստանալ, ձիու քայլ կատարել, ռակիրովկա անել, մատ անել, ֆուկ անել, սուսերներ ճոճել, ճիշտ նպատակակետին (դիպուկ) կրակել* և այլն:

Դարձվածների առաջացման աղբյուրներից մեկն էլ գրողների, արվեստագետ-ների, լրագրողների կողմից ստեղծած անհատական, հեղինակային շատ արտահայ-

տություններ ու բառակապակցություններ են, որոնք վերահաստատվում են ու անցնելով ժողովրդին, ընդունվում են նրա կողմից, դառնում են համագործածական: Օրինակ, Հ.Թումանյանի հեղինակած շատ արտահայտություններ, անվանումներ վերածվել են ԴՄ-ների, ինչպես՝ *Չախորդ Փանոս, Անրան Հուռի, Բաջ Նազար, Նետյի քարաբաղնիս, Կիկոսի մահը, բալլ բանկ է, աչքը թեքեցիր՝ բանիդ տերը չես, անբախտ վաճառականներ, Ավ. Իսահակյանի ստեղծած՝ քարից, հողից հաց քամել, աչքը ճամփին ծով դառնայ, խեղճին քշա ասել, գլուխը դնելու տեղ չգտնել, աչքերին թոզ փչել* և այլն:

Դարձվածների անսպառ աղբյուր է *ժողովրդական բանահյուսությունը*, հատկապես առածներն ու ասացվածքները, ինչպես՝ *Ցոան Վերզո, Չենով Օհան, հոնքը շինելու տեղ աչքն էլ հանել, ջաղացը կորցնել՝ չախչախի հետևից ընկնել, ճիպոտը իր քույրից կտրել, գելի գլխին ավետարան կարդալ, հոր փորոտը հորը կընկնի, մեխի գլխին բռունցքով չեն խփի, առուն չթած հոպ չեն ասի, մինչև Շուշանը զարդարվի, պատարագը կարձակվի*, և այսպիսի հազարավոր օրինակներ կարելի է բերել:

Ժողովրդական լեզուն ու բարբառները նույնպես դարձվածների հարստացման անհատում աղբյուրներ են. բերենք դրանցից մի քանիսը՝ *արյունը պղտորվել, թուրք կատիկը թռչել, ձեռն ու ոտքը քաշվել, քիթը բռնես՝ հոգին կտա, գլխին օյին բերել, էշին մատերը մի այլիք է, իջնելը՝ երկու, շունը շան թաթ չի ծամի, էծը էծին լավ է, քան մի սուրու ոչխար, գոռոզ գառան գլուխը գիլի փորն է*: Բարբառներից են դարձվածների արժեքներ ստացել նաև բազմաթիվ անեծքներ ու օրհնանքներ, ինչպես նաև գեեկարանություններ:

Ինչպես տեսանք վերևում, ցանկացած լեզվի դարձվածային համակարգի հարստացման աղբյուրներ են նաև տարբեր լեզուներից կատարված թարգմանությունները և պատճենումները: Լեզուն օրեցօր հարստանում է նաև դարձվածային նորարանություններով՝ պայմանավորված հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցող փոփոխություններով, ինչպես նաև գիտության ու տեխնիկայի աննախադեպ զարգացմամբ. դրանք լայն տարածում են գտնում հատկապես զանգվածային լրատվության միջոցով:

## ИСТОЧНИКИ ПРОИСХОЖДЕНИЯ И ВОЗНИКНОВЕНИЯ ФРАЗЕОЛОГИЧЕСКИХ ЕДИНИЦ

\_\_\_ *Резюме* \_\_\_

\_\_\_ *Х. Бадибян* \_\_\_

Фразеологизм – более высокое языковое явление: оно связано с более высоким уровнем развития языкового мышления человека, когда человек был в состоянии абстрагироваться, благодаря чему признак приписывается предмету и составляются словосочетания и предложения. Они же в более поздний период переосмысляются и превращаются в фразеологизмы.

В статье рассматриваются источники происхождения фразеологизмов армянского языка, отличаются многочисленные фразеологизмы, появившиеся с помощью как собственных языковых средств, так и путем заимствований, затрагиваются также фразеологические неологизмы.